ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ **2022 թ. ապրիլի 7**-ին տեղի ունեցած թիվ 8 նիստի

ՀՀ, ք. Երևան 07.04.2022 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով և ժամանակացույցով 2022 թ. ապրիլի 7-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 8 նիստը: Նիստին մասնակցեցին գիտական խորհրդի 88 անդամներից 74-ը (կից ներկայացվում է ցուցակը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Մերի Հովհաննիսյանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ ԵՊՀ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
2. «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ուսումնական գծով պրոռեկտոր Է. Վ. Ասրիյան):
3. 2022-2023 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տ. Գալստյան):
4. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
5. Երևանի պետական համալսարանի մագիստրոսի նոր կրթական ծրագրերի հաստատում (զեկ.՝ Որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Ս. Բուդաղյան):
6. Գիտխորհրդին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմի փոփոխություն (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան):
7. ԵՊՀ մի շարք ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպելու մասին ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան).
   7.1. ԵՊՀ երկրաֆիզիկայի ու ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպում Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի:

7.2. ԵՊՀ աստվածաբանության ու հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպում Աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոնի:

7.3. ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների) ու ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների) ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպում Ռուսաց լեզվի ամբիոնի:

7.4. ԵՊՀ ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ու ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպում Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի:

7.5. ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ու հայոց լեզվի պատմության՝ միաձուլման եղանակով վերակազմակերպում Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի:

7.6. ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի միաձուլում ակադ. Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և Հայ նորագույն գրականության պատմության ամբիոններին՝ վերակազմակերպելով Հայ գրականության պատմության և գրականության տեսության ու Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնների:

7.7. ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի միացում Հայոց պատմության ամբիոնին:

8. Ընթացիկ հարցեր

8.1. Յուրի Հովհաննիսյանին գիտության բնագավառում բացառիկ նվաճումների համար «ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի» կոչում շնորհելու հարցը:

8.2. «Պրոֆեսոր Արմեն Թռչունյանի անվան կրթաթոշակ» սահմանելու հարցը:

8.3. Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս. Գասպարյանի, նույն ամբիոնի պրոֆ. Ա. Կնյազյանի և դոցենտ Գ. Բարսեղյանի «Academic English: Theory & Practice» դասագիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

8.4. Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆ. Յուրի Ռուբենի Հակոբյանի «Մատրիցային անալիզի տարրեր»

աշխատությունը որպես ուսումնական ձեռնարկ տպագրության երաշխավորելու հարցը:

8.5. Մ. Օհանյանի և Ա. Օհանյանի «Developing Creative Writing: From Paragraph to Essay» աշխատությունը որպես բուհական դասագիրք վերահրատարակության երաշխավորելու հարցը:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը նիստի մեկնարկին շնորհավորեց կանանց Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ, ապա գիտխորհրդի կին անդամներին ծաղիկներ նվիրեց՝ նրանց մաղթելով արևշատություն, երկարակեցություն, բերկրանք ու սեր: Այնուհետև Հ. Հովհաննիսյանը հայտնեց ԵՊՀ գիտական ներքին դրամաշնորհների ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի առաջին հաղթողների անունները՝ շնորհավորելով նրանց ու հանձնելով հավաստագրեր:

Հայտարարված մրցույթում հաղթող են ճանաչվել Ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի դոցենտ Հեղինե Ղազոյանը, Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ Արթուր Աթանեսյանը, Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ Ինգա Բազուկյանը և Ընդհանուր մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Կարեն Ավետիսյանը:

Հավաստագրերի հանձնումից հետո Հ. Հովհաննիսյանը գիտխորհրդին ներկայացրեց ԵՊՀ զարգացման և նորարարությունների գծով նորանշանակ պրոռեկտոր Միքայել Հովհաննիսյանին և գիտքարտուղար Մերի Հովհաննիսյանին:

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին՝ առաջարկելով հաստատել նիստի օրակարգը: Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ հաստատվեց նիստի օրակարգը:

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին: Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց, որ հանձնաժողովն ուսումնասիրել է պրոֆեսորի գիտական կոչման 1 և դոցենտի գիտական կոչման 3 հավակնորդների ներկայացրած փաստաթղթային փաթեթները, ինչի արդյունքում պրոֆեսորի գիտական կոչման 1 և դոցենտի գիտական կոչման 3 հավակնորդներ ստացել են դրական երաշխավորություն ու ներկայացվել ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ Տիգրան Արթուրի Մարկոսյանը, Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ Նարինե Համլետի Մադոյանը, Իջևանի մասնաճյուղի ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ Ջանիբեկ Լիպարիտի Սրապիոնյանը: Պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդն էր Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ Քրիստինե Պետրոսի Կոստիկյանը:

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Տարիել Ղոչիկյան (նախագահ),
2. Գոհար Բարխուդարյան,
3. Էմմա Մարկոսյան:

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 74 անդամներից 73-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Տ. Ղոչիկյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները: Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	**ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ**	**Կողմ**	**Դեմ**	**Անվավեր**
1.	Մարկոսյան Տիգրան Արթուրի	70	2	1
2.	Մադոյան Նարինե Համլետի	72	1	0
3.	Սրապիոնյան Ջանիբեկ Լիպարիտի	73	0	0

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	**ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ**	**Կողմ**	**Դեմ**	**Անվավեր**
1.	Կոստիկյան Քրիստինե Պետրոսի	67	5	1

Որոշվեց.

դիմել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2. «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» հաստատում (զեկ.՝ ԵՊՀ ուսումնական գծով պրոռեկտոր Է. Վ. Ասրիյան):

Ռեկտոր Հ. Հովհաննիսյանը նշեց, որ առաջարկվող կարգը քննարկվել է գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման ու փորձաքննության մշտական հանձնաժողովում, ստացել դրական եզրակացություն: Ուսումնական գծով պրոռեկտոր Էլինա Ասրիյանը գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի խմբագրված տարբերակը: Նա ներկայացրեց առաջարկվող փոփոխությունները՝ փաստելով, որ նախագիծն անցել է քննարկման տարբեր փուլերով: Ներկայացված կարգի վերաբերյալ հնչեցին հարցեր, կարծիքներ ու նոր առաջարկություններ:

«Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը» դրվեց քվեարկության (կողմ՝ 69, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 4):

Որոշվեց.

հաստատել «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» ներկայացված նախագիծը:

3. 2022-2023 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերի հաստատում: Նիստի օրակարգային հաջորդ հարցի շրջանակում ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության պետ Տիգրան Գալստյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերը: Նա նշեց, որ իրականացվել է կրթական ծրագրերի գնահատում, ինչի արդյունքում ստացվել է դրանց ինքնարժեքը, որի հիման վրա էլ կատարվել են վարձավճարների փոփոխություններ: Ներկայացված հարցի վերաբերյալ հնչեցին կարծիքներ:

2022-2023 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերի հաստատումը դրվեց քվեարկության (կողմ՝ 70, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4):

Որոշվեց.

հաստատել 2022-2023 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերը:

4. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում: ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ Հրանտ Ժամհարյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների անվանացանկը, ըստ որի՝ առկա է 53 անվանական կրթաթոշակ (55 թեկնածու, որոնցից 13-ը՝ նոր):

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 74, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

հաստատել անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

5. Երևանի պետական համալսարանի մագիստրոսի նոր կրթական ծրագրերի հաստատում: Որակի ապահովման կենտրոնի տնօրեն Արմեն Բուդաղյանն օրակարգային հաջորդ հարցի շրջանակում գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց մագիստրոսի 8 կրթական ծրագիր՝ նշելով, որ դրանք անցել են համապատասխան կարգով սահմանված բոլոր փուլերով և պատրաստ են գործարկման: Ա. Բուդաղյանը նշեց, որ 8 կրթական ծրագրերից 4-ը նոր են, իսկ մյուս 4-ը՝ վերափոխված:
Մագիստրոսական նոր կրթական ծրագրերի հաստատման հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 74, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել Երևանի պետական համալսարանի մագիստրոսի նոր կրթական ծրագրերը:

6.Գիտխորհրդին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմի փոփոխությունը հաստատելու մասին: ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը զեկուցեց գիտխորհրդին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմի փոփոխության մասին՝ նշելով, որ Ժասմեն Աղասյանի փոխարեն հանձնաժողովի անդամ է դարձել Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ Հրանտ Ավանեսյանը:
Հանձնաժողովի կազմի փոփոխության հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 74, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել գիտխորհրդին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմի փոփոխությունը:

7. ԵՊՀ մի շարք ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպելու մասին ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկ: Ռեկտորը գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ մի շարք ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմա-կերպման հարցը, որը հավանության արժանանալու դեպքում ներկայացվելու է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Հ. Հովհաննիսյանի հավաստմամբ ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպման որոշումներն ընդունվել են համապատասխան ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից: Նա նաև նշեց, որ այս գործընթացի արդյունքում կրթական որևէ ծրագիր չի տուժում: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանը նշեց, որ չի մասնակցելու ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպման հարցի քվեարկությանը:

7.1. **ԵՊՀ երկրաֆիզիկայի ու ճարտարագիտական երկրաբանության ջրաերկրաբանության ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպում Երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի:**
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 71, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպման որոշումը:

7.2.ԵՊՀ աստվածաբանության ու հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպել Աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոնի:
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 71, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպման որոշումը:

7.3.ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների) ու ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների) ամբիոնները միաձուլման եղանակով վերակազմակերպել Ռուսաց լեզվի ամբիոնի:
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 71, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպման որոշումը:

7.4. ԵՊՀ ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ու ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպում Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի:
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 71, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպման որոշումը:

7.5. ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ու հայոց լեզվի պատմության՝ միաձուլման եղանակով վերակազմակերպում Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի:
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 71, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպման որոշումը:

7.6. ԵՊՀ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի միաձուլում ակադ. Հ. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և Հայ նորագույն գրականության պատմության ամբիոններին՝ վերակազմակերպելով Հայ գրականության պատմության և գրականության տեսության ու Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնների:
Հնչեցին կարծիքներ, որ ամբիոնի անվանումը երկարահունչ է: Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 71, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
հաստատել ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպման որոշումը:

7.7. ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի միացում Հայոց պատմության ամբիոնին:
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 71, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):
Որոշվեց.
հաստատել ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի՝ հայոց պատմության ամբիոնին միացման որոշումը:

8.Ընթացիկ հարցեր

8.1 Յուրի Հովհաննիսյանին գիտության բնագավառում բացառիկ նվաճումների համար «ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի» կոչում շնորհելու մասին: ԵՊՀ ռեկտորը տեղեկացրեց, որ ապրիլի 15-ին Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի և Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի հետ ստորագրվելու է եռակողմ հուշագիր, որի արդյունքում ԵՊՀ-ում բացվելու է տեղեկատվական կենտրոն: Այդ առիթով ԵՊՀ է այցելելու ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի ԳԱ իսկական անդամ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանը, և գիտական խորհրդին առաջարկեց գիտության բնագավառում բացառիկ նվաճումների համար նրան շնորհել «ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի» կոչում: Առաջարկությունը հավանության արժանացավ:
Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 74, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.
Յուրի Ցոլակի Հովհաննիսյանին շնորհել «ԵՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում»:

8.2. «Պրոֆեսոր Արմեն Թռչունյանի անվան կրթաթոշակ» սահմանելու մասին: Հիմք ընդունելով ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2022 թ. մարտի 17-

ի թիվ 9 նիստի որոշումը՝ քննարկվեց ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում «Արմեն Թռչունյանի անվան կրթաթոշակ» սահմանելու հարցը:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 74, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

սահմանել «պրոֆեսոր Արմեն Թռչունյանի անվան կրթաթոշակ»:

8.3. Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ս. Գասպարյանի, նույն ամբիոնի պրոֆ. Ա. Կնյազյանի և դոցենտ Գ. Բարսեղյանի «Academic English: Theory & Practice» դասագիրքը տպագրության երաշխավորելու մասին:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 74, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

«Academic English: Theory & Practice» դասագիրքը (հեղ.՝ Ս. Գասպարյան, Ա. Կնյազյան, Գ. Բարսեղյան) բուհական դասագիրքը երաշխավորել տպագրության և միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ սույն աշխատությունը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում:

8.4. **Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆ. Յուրի Ռուբենի Հակոբյանի «Մատրիցային անալիզի տարրեր» աշխատությունը որպես ուսումնական ձեռնարկ տպագրության երաշխավորելու մասին:**

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 74, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

«Մատրիցային անալիզի տարրեր» աշխատությունը (հեղ.՝ Յու. Հակոբյան) որպես ուսումնական ձեռնարկ երաշխավորել տպագրության:

8.5.«Developing Creative Writing: From Paragraph to Essay» աշխատանքը (հեղ.՝ Մ. Օհանյան, Ա. Օհանյան) որպես բուհական դասագիրք վերահրատարակության երաշխավորելու մասին:

Հարցը դրվեց քվեարկության (կողմ՝ 74, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Որոշվեց.

«Developing Creative Writing: From Paragraph to Essay» աշխատությունը (հեղ.՝ Մ. Օհանյան, Ա. Օհանյան) որպես բուհական դասագիրք երաշխավորել վերահրատարակության և միջնորդել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարությանը՝ սույն աշխատությունը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում:

Ընթացիկ հարցերի քննարկումների ժամանակ հնչեցին տարբեր դիտարկումներ ու պարզաբանումներ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ Մ. Վ. Հովհաննիսյան

07.04.2022 թ.